

Թռիերի համալսարանի կենտրոնի կատարած ուսումնասիրությունների արդյունքները և Գերմանիայում շախմատը դպրոցում ուսուցանելիս կիրառվող մեթոդները

Շախմատը, հրաշք այս խաղը անցյալում խաղացել են բացառապես կրթված ու խելացի մարդիկ:

Երբ նկարիչը ցանկացել է նկարում իր բնորդի խելացիությունը ցույց տալ, նրան նկարել է շախմատի տախտակի առջև: Երեխայի մասին խոսելիս, եթե ասվում է, որ երեխան գիտի շախմատ խաղալ, ապահովված է նրա խելացի լինելու մասին պատկերացումը:

Շախմատը իսկապես սովորական խաղ չէ. այն ցույց է տալիս խաղացողի մտավոր ունակությունը, բացահայտում է վերջինիս մտածելու կարողությունը: Այսօր շախմատը մտել է դպրոց և որոշ երկրներում դարձել է ուսումնական առարկա: Որքան ուրախալի է այս փաստը, բայց և նույնքան էլ անհանգստացնող է այն պատճառով, որ շախմատի դասավանդումը ճիշտ չկազմակերպելու դեպքում այն կտա հակառակ արդյունք: Այսինքն՝ շախմատը չի դառնա երեխայի համար սիրելի խաղ և փոխանակ զարգացնի նրա տրամաբանությունը, մտածելու ունակությունը, մինչև վերջ պայքարելու հաստատակամությունը, համառությունը, պայքարով վերջնական հաջողության հասնելու կամքը, կդառնա ոչ ցանկալի զբաղմունք, և երեխան տհաճությամբ կմասնակցի շախմատի դասերին, կանհանգստանա շախմատի դասերից ստանալիք գնահատականի համար, անհամբեր կսպասի դասի ավարտին...

Այսօր մեր խնդիրը շախմատի դասավանդումը դպրոցում ճիշտ կազմակերպելն է: Պիտի նկատի ունենալ մի կարևոր հանգամանք, որ ոչ բոլոր երեխաներն են խելացի ու ընդունակ և որպեսզի դասը գրավիչ ու արդյունավետ լինի, շախմատը երեխաներին որպես խաղ պիտի մատուցվի, իսկ շախմատի ուսուցչի խնդիրը պիտի լինի այս հրաշք խաղի միջոցով երեխաների տրամաբանությունը զարգացնելը, նրանց մտքի կենտրոնացումը լավացնելը, բնավորության որոշակի գծեր ձևավորելը: Պետք չէ մոռանալ, որ երեխաներին շախմատիստ դարձնելը ոչ թե մասսայական դպրոցների, այլ շախմատի դպրոցների և ակումբների գործն է: Գերմանիայում շախմատը որպես մոտիվացիոն առարկա գործում է տաս տարրական դպրոցներում. այն դասավանդվում է շաբաթական մեկ դասաժամ և աշակերտները չեն գնահատվում:

Դասավանդման հիմքում Թռիերի համալսարանի հոգեբանական դիագնոստիկայի կենտրոնի ուսումնասիրությունն է:

2003ից-2007 թթ անցկացվեց Օլեվիգ տարրական դպրոցում մի փորձ: Երեխաները, որոնք 4 տարի շարունակ շախմատ էին սովորել, իրենց սովորելու կարողությամբ անհամեմատելիորեն գերազանցում էին սովորական դպրոցների աշակերտներին: Մաթեմատիկայի խնդիրը, կարդացվող տեքստը հասկանալու կարողությունը 4-րդ դասարանում կրկնակի անգամ մեծ էր, քան Գերմանիայի Ռեհայնլանդ-Պֆալց երկրի

սովորական դպրոցներում:
Տեքստը կարդալ-հասկանալը 2,5 անգամ աճել էր, իսկ ճիշտ և պարզ արտահայտվելու, մտքերը վերարտադրելու կարողությունը՝ 3 անգամ: Ուսումնասիրության հեղինակների համար ակնհայտ էր, որ շախմատ խաղացող երեխաների ընդհանուր մակարդակը կտրուկ բարձրացել է և թույլ երեխաների առաջընթացը անժխտելի է:
Ներկայումս շախմատ առաջարկվող բոլոր դպրոցներում նույն արդյունքն է. շախմատ խաղացող երեխաների մոտ լավացել է հիշողությունը, կոնցենտրացիան և ընկալելու կարողությունը:

Համբուրգում ուսուցանող ուսուցիչներից մեկը նշում է, որ ոչ միայն մաթեմատիկա առարկայից է երեխաների մոտ աճ զգում, այլ նաև մյուս առարկաներից: Օրինակ՝ երեխան հարցերին պատասխանում է տրամաբանված, կարողանում է ճիշտ արտահայտվել, քարտեզը բացելիս էլ շատ ավելի հեշտացել է կորդինատներով աշխատելը և այն փաստը, որ սա պատահականություն չէ, ցույց է տվել Համբուրգում դպրոցականների համար նախատեսված թեստը, ըստ որի շախմատ խաղացող երեխաների սոցիալական ինդեքսը չխաղացողների սոցիալինդեքսից անհամեմատ բարձր է:

Շախմատը տալիս է նաև սոցիալական ասպարեզում դրական արդյունք: Այն երեխաները, որոնք նախկինում շատ արագ ագրեսիվ էին դառնում և բռունցքների անցնում, դարձել են ավելի հավասարակշռված: Ապրում եմ Գերմանիայում և երկար տարիներ զբաղվում եմ մարզական աշխատանքով: Շախմատ սովորեցնելը ինձ համար միշտ էլ եղել է սիրված աշխատանք: Ունեմ որոշակի հաջողություններ և ուզում եմ ձեզ ներկայացնել իմ ու իմ գերմանացի կոլեգաների փորձը: Ուզում եմ ներկայացնել մի քանի մեթոդներ, որով կարելի է օգնել երեխաներին ընկալել այս կամ այն թեման, ուժեղացնել թիմային ոգին և հանել երեխաների միջից պարտվելու անհանգստությունը:

Դասարանը բաժանեք մի քանի խմբի (ուժերով հավասար), գրատախտակին գրեք թեմաները և թեմաների տակ 10, 20, 30... թվերը: Թիմերի խաղացողներից մեկը ընտրում է իր ցանկացած թեման և իր ցանկացած թիվը (նշեմ՝ ինչքան բարձր է թիվը, այնքան բարդ է խնդիրը...): Ուզում եմ նշել, որ թույլ աշակերտը, ընտրելով հեշտ խնդիր, հոգեբանորեն չի ընկճվում, քանի որ ճիշտ լուծելիս էլ իր թիմին միավոր է բերում և խաղը շարունակելու հնարավորություն է տալիս իր թիմին: Այստեղ պետք է նշեմ, որ շատ մեծ դրական արդյունք է նկատվում նաև այն երեխաների մոտ, ովքեր դասարանում այդքան էլ սիրված չեն...

Շատ սիրված է նաև <<հուշի՛ր>> խաղը, որտեղ էլի թիմային ոգին է աճում: Թիմը 2 հոգուց է բաղկացած՝ մի ուժեղ և մի թույլ շախմատիստից: Թույլ շախմատիստները նստում են տախտակի առջև, իսկ ուժեղ շախմատիստը իրավունք ունի օգնելու իր

թիմակցին, սակայն նա միայն պիտի ֆիզուրի անունը ասի, որով և իր թիմակիցը պետք է անպայման քայլ կատարի:Խաղը դառնում է ավելի ծիծաղելի, եթե դրան ավելանում է շախմատի ժամացույցը:Այստեղ թույլ շախմատիստը պետք է, իհարկե, փորձի կռահել իր ուժեղ թիմակցի մտքերը և շատ դրական արդյունք է տալիս.... Ֆիզուրների քայլերը և արժեքը սովորեցնելիս շատ արագ երեխաները մտապահում են ֆիզուրների պայմանական արժեքը և հաշվելու կարողությունը,երբ շախմատային խաղաքարտերով 11 են խաղում:Կարծում եմ այս խաղը ծանոթ է շատերին:Սեղանին պառկած խաղաքարերի ընդհանուր գումարը պետք է 11 կազմի:Արքան, իմիջիայլոց, կարող է սեղանին դրված բոլոր խաղաքարտերը շահել:Այստեղ կարող եք խաղաքարտերը պատրաստել կամ ձեր դասաժամին,կամ էլ աշխատանքի ուսուցման ուսուցչի հետ պայմանավորվել...Բավական է առաջին դասաժամին ,երբ ֆիզուրների հետ եք ծանոթացնում, երեխաները իրենց սովորած ֆիզուրները կպցնեն խաղաքարին:Այսպես թե այնպես առաջին օրը քանի որ շատ բան կա սովորելու, փոքրիկ ընդմիջումները թարմացնող հետևանք կտան:Երեխաների ուշադրությունը բարձրացնելու համար և մարզելու ֆիզուրը հարվածի տակ չդնելը կամ հակառակորդի անպաշտպան ֆիզուրը նկատելը լավ է <<ավագակ>> շախմատ խաղը(Հայաստանում այն ծանոթ է <<պաղղավկի>> անունով):Նույն նպատակով գլուխկոտրուկների մեջ կարելի է մտցնել <<վարորդական իրավունքի ձեռքբերման>> խնդիրը:Դիրքեր են,որտեղ շատ սև ֆիզուրներ կան տախտակի վրա և մի սպիտակ ֆիզուր քառակուսու մեջ վերցված մեր մեքենան(ասենք նավակ c 4-ում):Տախտակի վրա d 1 դաշտը նշված է որպես նպատակ:Երեխայի խնդիրն է հնարավորինս քիչ քայլերով առանց ավտովթարի (առանց հարվածվող դաշտի վրա կանգնելու) d 1 հասնել:Եթե աշակերտը չնկատի ու հարվածի տակ դնի ֆիզուրը, խնդիրը լուծելիս ստանում է 7 միավոր տուգանք:Ճիշտ լուծելու դեպքում հաշվվում է կատարած քայլերի քանակը և վերջում գումարվում է ամբողջ էջում լուծած միավորները:Որ աշակերտը ամենաքիչ քայլերով է նպատակին հասնում, նա էլ ճանաչվում է հաղթող և ստանում է <<վարորդական իրավունք>>:Այս խաղը լավացնում է կենտրոնացվածությունը և ստրատեգիական պլանը ընտրելուց հետո ճիշտ տարբերակի ընտրումը: Մատը բացատրելիս կարելի է խաղալ <<ատում>>շախմատ:Երբ որ մի ֆիզուր տախտակի վրա հարվածում է մի ուրիշ ֆիզուրի, <<պայտում>> է նաև հարվածող այդ ֆիզուրը և իր շուրջը գտնվող բոլոր ֆիզուրները:Նպատակն է,իհարկե, հակառակորդի արքային տախտակից վերացնելը:Նույն արդյունքն է տալիս նաև <<ճառագայթ>> խաղը:Ֆիզուրները հարվածել չի կարելի, այլ կարելի է դրանք ճառագայթել:Նպատակը հակառակորդի արքային ճառագայթելն է:Այս խաղը նպաստում է նաև մի քանի քայլ հաշվելու և ճիշտ կողմնորոշվելու կարողությանը: Երբ երեխաները արդեն ավելի լավ են խաղում, կարելի է <<նապաստակ>> շախմատ խաղալ:Այս դեպքում խաղացողները կանգնում են դեմ դիմաց, մի քանի տախտակ մի գծով շարված են:Ամեն քայլից հետո բոլոր մասնակիցները ժամացույցի ուղղությամբ փոխում են տեղերը:Խաղը շատ հետաքրքիր է հատկապես եզրերի տախտակների

վրա, քանի որ հնարավորություն կա միաժամանակ 2 գույնով էլ քայլ կատարելու:Ավարտվում է խաղը, երբ մասնակիցներից մեկը տախտակներից մեկի վրա մատ է անում:Նշեն,որ այս խաղում հաղթում են հաճախ նաև թույլ խաղացողները, որը և շատ ոգևորիչ է:<<Ես դեմ եմ >> խաղը սովորեցնում է երեխաներին մի քանի պլաններ ընտրել, քանի որ խաղալիս յուրաքանչյուր քայլի ժամանակ մեկ անգամ կարող է շախմատիստը դեմ լինել հակառակորդի կատարած քայլին...Այդ դեպքում գործում է <<պլան բ-ն>>:Միայն մատի դեպքում կարելի է բողոքարկել...Այս խաղը սովորեցնում է նաև մտածել՝արդյո՞ք իմ հակառակորդը լավագույն քայլն արեց, թե՞ այս քայլը միայն նրա համար է արվել, որ ես բողոքարկեմ...Կան էլի շատ հետաքրքիր խաղեր,ինչպես օրինակ <<դուկատ շախմատ>>,<<ինձ համար,քեզ համար,ինձ համար>>, և այլն, որը ցանկության դեպքում կարող եմ ցույց տալ...Թեմաները բացատրելիս կարելի է այն անել երեխաների կողմից սիրված հերոսների միջոցով:Օրինակ՝զինվորային վերջնախաղում բանալի դաշտը բացատրելիս կարելի է թոմ ու Ջերրի մուլտֆիլմի հերոսների օգնությամբ դիմել:Սպիտակ արքան e4-ում մուկն է:Նա գողացել է պանիրը, որը կանգնած է d4-ում՝սպիտակ զինվորը:Մուկն ուզում է գողացած պանիրը d8-ի բույնը տանի:d-6ում կանգնած սև արքան կատուն է, որի հանձնարարությունն է խանգարել մկանը, նրան վախեցնել...Սև արքան կատուն e6 գալով օպոզիցիա է անում, իսկ եթե օպոզիցիան չի ստացվում, կատուն պիտի պանրի առաջ սպասի օպոզիցիային... Տիպիկ մատային դիրքերը ներկայացնելիս ավելի լավ է երեխաների մոտ տպավորվում, երբ դրանք ինչ-որ մի պատմության հետ էք կապում:Օրինակ խեղդուկ մատը բացատրելուց հետո շարում եմ մի դիրք-սև թագուհին h3 է մտնում որպես մի ծեր կին, որը պարուրված է ուղղակի սև շորերի մեջ և սպիտակ f2,g3 և h2 սպիտակ զինվորների կողմից չի ճանաչվում...Սև թագուհին պնդում է,որ ինքը ծեր բժիշկ է ու զիտի ներկայացրած հեքիաթներից ոչ մեկը հետաքրքիր չէ,բայց բոլորի աչքերը ոգևորությունից փայլում են, երբ իրենց խնդիր հեքիաթ են ներկայացնում: Թագուհով ու փղով մատն անցնելիս սարդ-մատն եմ բացատրում:Ուզում եմ նշել, որ այս անունը դասի ժամանակ երեխաների հետ որոշեցինք և մինչև հիմա այս մատը աշակերտներիս ամենասիրած մատն է:Կինոթատրոններում Spiderman կինոնկարն էին ցուցադրում... Դասի ժամանակ թ. հ 6 դնելով աշակերտներիս բացատրում եմ, որ սև արքան g8-ում մատային ցանցի մեջ է ընկնում և սևը ստիպված ն-ով f8-ը պետք է լքի ու քանի որ f7-ի վրայից թագուհով մատ անմիջապես չի ստացվում, պետք է միջանկյալ քայլերով սպ. փղին g6 տանել:Աշակերտներիցս մեկը մատային ցանցը վերափոխեց սարդի ցանցին:Սև արքային՝ ճանճին,որը սարդի ցանցն է ընկել,իսկ փղի միջանկյալ քայլը փ. հ 7 կծում է ճանճին-փ.ց 6 ատամն հանում է-թ հ 7 մոտենում է ճանճին -թ f 7 ուտում...Այս 4 քայլանոց խնդիրը բոլորի մոտ պատկերի ձևով է տպավորվել և հույսով եմ, որ երբեք չի մոռացվի... Աշխարհի ֆուտբոլի առաջնության ժամանակ շատ սիրված թեմա դարձավ <<11

մետրանոց>> մատր:Իհարկէ, Հայաստանում դա հայտնի է ուրիշ անունով:Սպ. Ա. ց 1
դարպասապահ, ն.Ֆ1 ն.հ1 սյուները,սև թ.ց3#:

Պետք է նշեմ , որ տնային հանձնարարություն արտահայտությունը իմ
բառապաշարից վաղուց հանել եմ,քանի որ երեխաների մոտ բացասական էմոցիաներ
է առաջացնում:Եթե երեխային հանձնարարությունը դուր է գալիս, նա սիրով էլ անում
է:

Միբեյի՛ ուսուցիչներ, ես կոչ եմ անում, որ դուք դպրոցական դասագրքերից օգտվեք և
ոչ թե թաքնվեք գրքերի հետևում:Դասագրքերը ձեզ պիտի օգնեն և ոչ թե խանգարեն
այս գեղեցիկ խաղը ուսուցանելու գործում:Ես համոզված եմ, որ հարստացնելով
ուսուցման ձեր մեթոդները նաև մեր առաջարկած մեթոդներով դուք ավելի մեծ
արդյունքի կհասնեք. երեխաները ավելի շատ կսիրեն շախմատը և շախմատի
ուսուցումը դպրոցում կծառայի իր նպատակին: